ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԴՐԱՁԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

ԴԱՍ 4

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԴՐԱՁԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

«Հեռաուսուցման դասընթացների մշակում Արդարադատության ակադեմիայի համար» ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից և իրականացվել է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից՝ Արդարադատության ակադեմիայի հետ գործընկերությամբ: Սույն նյութում արտացոլված են հեղինակների տեսակետները, մեկնաբանությունները և եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել ԱՄՆ Պետքարտուղարության տեսակետների հետ:

ԴԱՍ 4

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՎԱՐՔԱԳԾԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԻ/ՕԳՈՒՏԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս դասը կազմված է հետևյալ 4 բաղադրիչներից.
մոտիվացնող ներածական տեսանյութ,
դասի տեսական նյութ,
բառարան և
ինքնաստուգիչ հարցեր:
Բոլոր բաղադրիչների յուրացման համար
Ձեզ հարկավոր է 4 ժամ:

Ինքնաստուգիչ հարցերը և բացատրություններով ուղեկցվող դրանց պատասխանները ներառված չեն այս ձեռնարկում:

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ



Տեսանյութն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 5 րոպե:

Ուշադրությամբ կարդացեք դասի տեսական մասը՝ օգտվելով բառարանից, և այն յուրացնելուց հետո միայն պատասխանեք ինքնաստուգիչ հարցերին:
Այս աշխատանքների համար անհրաժեշտ է մոտ 205 րոպե:

Կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը կանխորոշ գործոններից մեկը կոռուպցիոն վարքագծի արդյունքում ստացված գույքի/օգուտի բռնագրավման հնարավորություն տվող գործուն մեխանիզմների առկայությունն է:

Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի (1) 31-րդ հոդվածը սահմանում է, յուրաքանչյուր Մասնակից պետություն առավելագույն չափով, որը հնարավոր է իր ներքին իրավական համակարգի շրջանակներում, պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել բռնագրավման հնարավորությունն ապահովելու համար՝

1. հանցագործություններից ստացված եկամուտների, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան, կամ այն գույքի, որի արժեքը համապատասխանում է այդպիսի եկամուտների արժեքին.
2. գույքի, սարքավորման և այլ միջոցների, որոնք օգտագործվել են կամ նախատեսվել են իրավախախտումներ կատարելիս օգտա

գործելու համար, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան:

Հիշյալ կոնվենցիայի 31-րդ հոդվածը նաև սահմանում է, որ եթե հանցագործություններից ստացված այդպիսի եկամուտներն ամբողջությամբ կամ մասնակիորեն վերածվել կամ փոխակերպվել են այլ գույքի, ապա գույքի բռնագրավում պետք է կիրառվի այդպիսի գույքի նկատմամբ: Եթե հանցագործություններից ստացված եկամուտները միացվել են օրինական աղբյուրներից ձեռք բերված գույքին, ապա, բռնագրավման ենթակա է գույքի այն մասը, որը համապատասխանում է միացված եկամուտների գնահատված արժեքին:

Բռնագրավում պետք է կիրառվի նաև շահույթի կամ այլ եկամուտների նկատմամբ, որոնք ստացվել են հանցագործություններից ստացված եկամուտներից՝

- այն գույքից, որին վերածվել կամ փոխակերպվել են հանցագործություններից ստացված եկամուտները,
- այն գույքից, որին միացվել են հանցագործություններից ստացված եկամուտները:

Միևնույն ժամանակ, կոնվենցիան հատուկ մատնանշում է, որ բռնագրավման վերաբերյալ դրույթները չպետք է մեկնաբանվեն այնպես, որ վնաս պատճառվի բարեխիղճ երրորդ անձանց իրավունքներին:

Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 2-րդ հոդվածում պարզաբանվում է, թե ինչ պետք է հասկանալ «հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ» հասկացության ներքո. որպես այդպիսին է դիտարկվում ցանկացած գույք, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ձեռք է բերվել կամ ստացվել է որևէ հանցանք կատարելու հետևանքով: Կոնվենցիան հստակեցնում է նաև գույքի հասկացությունը՝ սահմանելով այն որպես ցանկացած արժեք՝ լինի նյութական կամ ոչ նյութական, շարժական կամ

Փորձեք ինքնուրույն սահմանել բարեխիղճ երրորդ անձի հասկացությունը: Ըստ Ձեզ՝ արդյոք կարո՞ղ է բարեխիղճ երրորդ անձանց իրավունքների իրավաչափ պաշտպանությունը բարդացնել բռնագրավման գործընթացը: Եթե այո, ապա խնդրում ենք հիմնավորել և մեկնաբանել:

անշարժ, իրերի կամ իրավունքների ձևով արտահայտված, ինչպես նաև իրավաբանական փաստաթղթեր կամ ակտեր, որոնք հաստատում են այդպիսի արժեքների նկատմամբ սեփականության իրավունքը կամ դրանցում շահ ունենալը:

Կոռուպցիոն հանցագործության արդյունքում ստացված եկամուտների բռնագրավման կարևորությունն ընդգծում է նաև Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան, որի 19-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ «յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են այդ Կողմին լիազորելու համար բռնագրավել կամ այլ կերպ զրկել սույն Կոնվենցիայով նախատեսված հանցագործությունների գործիքներից կամ եկամուտներից կամ այն գույքից, որը համարժեք է նման եկամուտներին» (2):

Մտապահեք բռնագրավման երկու հիմնական տարբերակները՝ ըստ Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի և Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի: Ձեր կարծիքով՝ ներպետական կարգավորումներով ՀՀ-ում ճանաչվածՙ են բռնագրավման այլ տարբերակներ:

Ըստ էության, հիշյալ կոնվենցիաները շեշտադրում են կատարում բռնագրավման երկու հիմնական տարբերակների վրա՝

- հանցանքի կատարման գործիքների, միջոցների բռնագրավում,
- հանցանքի կատարման արդյունքում ձեռք բերված գույքի, եկամուտների բռնագրավում:

Թեև հիշյալ կոնվենցիաներում օգտագործվում է «բռնագրավում» եզրույթը, սակայն բովանդակային առումով այն նույնանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածում տեղ գտած բռնագանձման ինստիտուտի հետ:

Նշված հոդվածի 1-ին մասը հստակ սահմանում է, որ հանցագործության կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված ցանկացած գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, այնպիսի հանցագործության կատարման համար օգտագործված կամ օգտա-

գործման համար նախատեսված գործիքները և միջոցները, որի կատարման արդյունքում ստացվել է գույք, ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, մաքսանենգության ճանապարհով ՀՀ սահմանով տեղափոխված մաքսանենգության առարկաները, իսկ դրանց բացակայության դեպքում դրանց համարժեք գույքը, բացառությամբ բարեխիղճ երրորդ անձի գույքի, տուժողին և քաղաքացիական հայցվորին հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման համար անհրաժեշտ գույքի, ենթակա է բռնագանձման՝ հօգուտ պետության:

Օրենսդիրը նշված հոդվածում հստակեցնում է նաև գույքի հասկացությունը, այն դիտարկելով որպես ցանկացած տեսակի նյութական բարիքները, քաղաքացիական իրավունքի շարժական կամ անշարժ օբյեկտները, ներառյալ՝ ֆինանսական (դրամական) միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, գույքային իրավունքները կամ շահերը հավաստող փաստաթղթերը կամ այլ միջոցները, գույքից ստացված կամ դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսները, շահութաբաժինները կամ այլ եկամուտները, ինչպես նաև հարակից և արտոնագրային իրավունքները: 2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքում բռնագանձման ենթակա գույքի հասկացությունը լրամշակվել է և դրա մեջ ներառվել են նաև վճարային գործիքները:

Ուշադրություն դարձրեք այն փաստին, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքով գույքի հասկացությունն ավելի ընդգրկուն է դարձել:

ՀՀ թե՛ գործող, թե՛ 2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված քրեական օրենսգրքերում ուղղակիորեն մատնանշված չէ, թե ինչպես պետք է վարվել կրիպտոարժույթի հետ, որը, օրինակ կարող է տրվել որպես կաշառք, սակայն հիշյալ հարցին պատասխան տրված է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում, որտեղ այն դիտարկվում է որպես գույք:

Ծանոթացեք ՀՀ գործող քրեական օրենսգրքով նախատեսված՝ գույքի բռնագանձման տեսակներին:

ՀՀ գործող քրեական օրենսգրքով, ըստ էության, օրենսդիրը նախատեսում է գույքի բռնագանձման 3 տարբերակ՝

- կանխարգելիչ՝ հանցագործության կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների և միջոցների բռնագանձում,
- հանցագործության արդյունքում առաջացած կամ ստացած գույքի, այդ գույքի օգտագործումից ստացած եկամուտների կամ այլ գույքի բռնագանձում,
- հանցագործության արդյունքում ստացած գույքին/եկամուտներին համարժեք գույքի բռնագանձում այն դեպքերում, երբ հանցավոր ճանապարհով ստացածը հնարավոր չէ հայտնաբերել կամ բռնագանձել:

ՀՀ գործող քրեական օրենսգիրքը նաև անդրադառնում է այն դեպքերին, երբ բռնագանձման գործընթացում ի հայտ է գալիս բարեխիղճ երրորդ անձ, որը գույքն այլ անձի հանձնելիս չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ այդ գույքն օգտագործվելու է կամ նախատեսվում է օգտագործել հանցավոր նպատակներով, ինչպես նաև այն անձը, որը գույքն այլ անձից ձեռք բերելիս չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ այդ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով: Նման դեպքերում, երբ տուժողի և բարեխիղճ երրորդ անձի միջև առկա է վեճ բռնագանձման ենթակա գույքի վերաբերյալ, այդ գույքի բռնագանձում կարող է կատարվել քաղաքացիական դատավարության կարգով:

Օրենսդիրն անդրադառնում է նաև համաձայնեցման և համագործակցության վարույթների կիրառման դեպքերում բռնագանձման հարցերին, սահմանելով, որ բռնագանձմանն առնչվող՝ ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են, եթե համաձայնության արձանագրությամբ կամ մինչդատական համագործակցության վերաբերյալ համաձայնագրով բռնագանձման ենթակա գույքի կամ դրա

չափի վերաբերյալ այլ բան նախատեսված չէ, բացառությամբ շրջանառությունն արգելված կամ անձանց ու հասարակության համար վտանգ ներկայացնող գույքի, որը ենթակա է պարտադիր բռնագանձման՝ հօգուտ պետության: Բանակցությունների արդյունքում համաձայնեցված՝ բռնագրավման ենթակա գույքի չափը չի կարող պակաս լինել ընդհանուր կարգով բռնագրավման ենթակա գույքի արժեքի 75 տոկոսից:

Չնայած ներկայացված կանոնակարգումներին՝ գույքի բռնագանձման առումով մի շարք հարցեր դեռևս մնում են բաց. խնդրահարույց է, օրինակ, անձին պատկանող տրանսպորտային միջոցի բռնագանձման հարցը, որն օգտագործվել է հանցանքի կատարման ընթացքում:

Այս առումով ավելի հետևողական է 2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված նոր քրեական օրենսգիրքը, որի 121-րդ հոդվածը սահմանում է, որ հանցագործության արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտը և այլ տեսակի օգուտը, հանցագործության համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքը և միջոցը, հանցագործության առարկան դատարանի կողմից ենթակա են պարտադիր բռնագրավման՝ անհատույց վերցման, բացառությամբ քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերի: Ընդ որում, գույքի բռնագրավումը կարող է կիրառվել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձի նկատմամբ:

Մտապահեք գույքի բռնագրավման վերաբերյալ նոր քրեական օրենսգրքով սահմանված այս կարևոր դրույթը:

Հանցանքը կատարելու համար օգտագործված կամ շրջանառությունից հանված հանցագործության գործիքները կամ միջոցները, ինչպես նաև հանցագործության առարկա հանդիսացող իրերը, նյութերը, փաստաթղթերը, գույքը, առարկաները ենթակա են պարտադիր բռնագրավման, բացա-

ռությամբ այն դեպքի, երբ դրանց բռնագրավումն ակնհայտ անհամաչափ է՝ հաշվի առնելով կատարված հանցանքի բնույթն ու ծանրության աստիճանը: Հենց այս ձևակերպումն էլ հնարավորություն է ընձեռում, օրինակ, բռնագանձում չտարածել տրանսպորտային այն միջոցի վրա, որի բռնագանձումն ակնհայտ անհամաչափ է կատարված կոռուպցիոն հանցանքի տեսանկյունից:

Շրջանառությունից հանված օբյեկտ համարվող կամ անձանց ու հասարակության համար վտանգ ներկայացնող գույքը ենթակա է պարտադիր բռնագրավման՝ անկախ այն հանգամանքից, թե ում է այն պատկանում:

Բռնագրավման ենթակա չէ հանցանք կատարած անձի կամ նրա խնամքի տակ գտնվող անձի համար անհրաժեշտ գույքն այն ցանկին համապատասխան, որը սահմանված է օրենքով, բարեխիղճ երրորդ անձի գույքը, տուժողին վերադարձման ենթակա գույքը, ինչպես նաև տուժողին հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման համար անհրաժեշտ գույքը: Եթե բռնագրավման ենթակա գույքը ծանրաբեռնված է բարեխիղճ երրորդ անձանց իրավունքներով, ապա այդպիսի իրավունքները պահպանվում են բռնագրավումից հետո:

Եթե հանցագործության արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտը կամ այլ տեսակի օգուտը միախառնված է օրինական ճանապարհով ստացված գույքի հետ, պատկանում է բարեխիղճ երրորդ անձի, կամ այն չի հայտնաբերվել, ապա բռնագրավման է ենթակա համարժեք գույք:



Ծանոթացեք բնորոշմանը:

ՀՀ նոր քրեական օրենսգիրքը հստակեցնում է նաև բարեխիղճ երրորդ անձի հասկացությունը, որպես այդպիսին դիտարկելով նրան, ով թեև ձեռք է բերել հանցավոր ծագում ունեցող գույքը կամ ծանրաբեռնել է այն իր իրավունքներով, բայց չգիտեր և չէր կարող իմանալ, որ այդ գույքը հանցագործության արդյունքով ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված գույք է, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտ կամ այլ տեսակի օգուտ, հանցագործության համար օգտագործ-

ված կամ օգտագործման համար նախատեսված գործիք կամ միջոց կամ հանցագործության առարկա: Բարեխիղճ երրորդ անձ է համարվում նաև այն անձը, որի գույքն իր կամքից անկախ հանգամանքներով դուրս է եկել իր տիրապետությունից, կամ որը գույքը հանձնել է այլ անձի, եթե նա չգիտեր ու չէր կարող իմանալ, որ այդ գույքն օգտագործվելու է կամ նախատեսվում է օգտագործել հանցանք կատարելու նպատակներով:

ՀՀ նոր քրեական օրենսգիրքն անդրադարձել է նաև այն հարցի կանոնակարգմանը, թե արդյոք հնարավոր է բռնագանձում իրականացնել այն իրավիճակներում, երբ դատարանի կողմից քրեական հետապնդումը ոչ ռեաբիլիտացիոն հիմքով դադարեցվել է: Նման իրավիճակները գործնականում հաճախ են հանդիպում և գույքի բռնագանձումն այդ դեպքերի վրա չտարածելը հանցավորի համար լավ տարբերակ կարող է հանդիսանալ կոռուպցիոն հանցագործության արդյունքում ձեռք բերած գույքը և եկամուտներն անարգել օգտագործելու համար:

Հենց դա հաշվի առնելով էլ՝ ՀՀ նոր քրեական օրենսգիրքը հստակ սահմանել է, որ դատարանի կողմից քրեական հետապնդումը ոչ ռեաբիլիտացիոն հիմքով դադարեցնելն արգելք չէ սույն հոդվածով նախատեսված հանցավոր ծագում ունեցող գույքը, եկամուտը կամ այլ տեսակի օգուտը, հանցագործության գործիքը, միջոցը կամ հանցագործության առարկան բռնագրավելու համար:

Ուշադրություն դարձրեք այս նոր կանոնակարգմանը՝ ըստ անհրաժեշտության այն հետագայում կիրառելու համար:

Խնդրահարույց հարցերից է նաև այն, թե արդյոք հնարավոր է բռնագանձում տարածել այն գույքի/եկամուտների վրա, որոնք ձեռք են բերվել նախքան ՀՀ օրենսդրությամբ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարցերի կանոնակարգումը. հնարավոր է արդյո՞ք դրանք ևս դիտարկել որպես ապօրինի ծագում ունեցող գույք:

Այս հարցին պատասխան է տրվել 2020 թ.-ի ապրիլի 16-ին ընդունված «Ապօրինի ծագում ունեցող գույ-

քի բռնագանձման մասին» ՀՀ օրենքում (3), որը սահմանում է ապօրինի ծագում ունեցող գույքի հասկացությունը, այն է՝ գույք, այդ թվում՝ մեկ միավոր գույք, մի քանի միավոր գույք կամ մեկ միավոր գույքի բաժին, որի ձեռքբերումը չի հիմնավորվում օրինական եկամուտներով՝ անկախ ապօրինի ծագում ունեցող գույքի հարցերը կանոնակարգող օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ կամ հետո ձեռք բերված լինելու հանգամանքից, ինչպես նաև այդպիսի գույքի օգտագործումից ստացվածը (պտուղները, արտադրանքը, եկամուտները):

Հիշյալ օրենքը սահմանում է նաև օրինական եկամտի հասկացությունը, այն բնորոշելով որպես ՀՀ դրամով, արտարժույթով, կրիպտոարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտներն առանց հարկերի և պարտադիր վճարների, այդ թվում՝

- աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումներ,
- գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումներ օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար ստացվող հատուցումը (ռոյալթի) և հեղինակային վարձատրությունը,
- ստացված փոխառությունները (վարկերը),
- տրված փոխառությունների դիմաց ստացված տոկոսը և այլ հատուցում,
- շահաբաժինները,
- խաղատներում կամ շահումներով խաղերում ստացված եկամուտները (շահումները),
- մրցույթների կամ մրցությունների, ինչպես նաև վիճակախաղերի իրային կամ դրամական շահումները (մրցանակները),
- նվիրատվության կամ օգնության կարգով ստացված գույքը (նաև դրամական միջոցները),

- ժառանգության կարգով ստացված գույքը (նաև դրամական միջոցները),
- ապահովագրական հատուցումները,
- ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը,
- գույքն օտարելուց ստացված եկամուտը,
- վարձակալության դիմաց ստացված վճարը կամ այլ հատուցում,
- միանվագ վճարները,
- գույքային իրավունքներից ստացված եկամուտը,
- քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտը,
- կենսաթոշակը,
- գյուղատնտեսական արտադրանքի իրացումից կամ գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտը:

Նշված օրենքը սահմանում է նաև անձին պատկանող գույքի բնորոշումը, հստակեցնելով, որ այն կարող է ներառել գույք, որը՝

1 սեփականության իրավունքով պատկանում է տվյալ անձին, այդ թվում՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքի դեպքում՝ անձին պատկանող բաժինը, իսկ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի դեպքում՝ գույքն ամբողջությամբ,

2 սեփականության իրավունքով պատկանում է այլ անձի, կամ որի նկատմամբ սեփականության իրավունք չի ծագել, բայց որի իրական շահառու է հանդիսանում տվյալ անձը,

3 ուսումնասիրվող ժամանակահատվածում տվյալ անձն անհատույց կամ փաստացի անհատույց կամ շուկայականից էականորեն ցածր գնով փոխանցել է իր հետ փոխկապակցված անձի:



Ծանոթացեք բնորոշմանը:

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքն արդյունավետ այլընտրանք է՝ կոռուպցիոն հանցագործությունների արդյունքում ձեռք բերված գույքի բռնագանձումը քաղաքացիաիրավական ընթացակարգով ապահովելու համար: Օրենսդիրը սահմանում է, որ կոռուպցիոն հանցագործությունների առումով՝ գույքի բռնագանձման քաղաքացիաիրավական ընթացակարգի նախաձեռնման հիմքեր կարող են լինել՝

- ուժի մեջ մտած մեղադրական դատական ակտը, որով հաստատվում է կոռուպցիոն հանցագործություններից որևէ մեկի կատարումը, և տվյալ քրեական գործի նյութերով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ դատապարտված անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որը չի բռնագանձվել դատավճռով,
- հարուցված քրեական գործով անձը որպես մեղադրյալ է ներգրավվել կոռուպցիոն հանցագործություններից որևէ մեկի կատարման համար, և առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք.
- առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն կոռուպցիոն հանցագործություններից որևէ մեկի կատարման առնչությամբ քրեական հետապնդումը կամ քրեական գործի հարուցումն անհնար է հետևյալ հիմքերից մեկով.
  1. ընդունվել է համաներման մասին օրենք,
  2. անցել են վաղեմության ժամկետները,
  3. անձը մահացել է,
  4. անձն արարքը կատարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկվելու՝ օրենքով նախատեսված տարիքին.
- առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն կոռուպցիոն հանցագործություններից որևէ մեկի կատարման առնչությամբ հարուցված քրեական գործը կասեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկով.

- «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հայտնաբերված տվյալներով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ պաշտոնատար անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք,
- օտարերկրյա դատարանի կայացրած մեղադրական դատական ակտի առկայությունը, եթե այն ճանաչվել է ՀՀ-ում:

Ինչպես և քրեական օրենսգրքերը, քննարկվող օրենքը ևս սահմանում է, որ եթե ապօրինի ծագում ունեցող գույքը փոխանցվել է բարեխիղճ ձեռք բերողի, կամ այն անհնար է նույնականացնել, առանձնացնել կամ բռնագանձել, ապա դատարանի որոշմամբ, համապատասխան պահանջի առկայության դեպքում, պատասխանողից կարող է բռնագանձվել հայցի ներկայացման պահի դրությամբ ապօրինի ծագում ունեցող գույքի շուկայական արժեքի չափով գումար:

Առավել մանրամասն են կարգավորվում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման դեպքերը գույքը ձեռք բերողից՝ սահմանելով, որ անձին պատկանող գույքը, որը հանդիսանում է ապօրինի ծագում ունեցող գույք, և որը ձեռք է բերվել այլ անձի կողմից, ենթակա չէ բռնագանձման բարեխիղճ ձեռք բերողից: Անձը չի հանդիսանում բարեխիղճ ձեռք բերող, եթե իրավասու մարմինն ապացուցում է, որ այդ անձը գույքը ձեռք բերելու պահին գիտեր կամ ողջամտորեն կարող էր իմանալ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու մասին: Փոխարենը՝ անձը հանդիսանում է բարեխիղճ ձեռք բերող այն դեպքում, երբ ապացուցում է, որ գույքն իրեն փոխանցվել է որպես կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցում կամ ալիմենտ:

Անձին պատկանող գույքի նկատմամբ նրա հետ չփոխկապակցված անձի սեփականության իրավունքից տարբերվող գույքային իրավունքներն պահպանվում են, եթե իրավասու մարմինը չի ապացուցում, որ այդ իրավունքները ծագելու պահին անձը գիտեր կամ ողջամտորեն կարող էր իմանալ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու մասին:

Եթե գույքը ծանրաբեռնված է անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձի կամ նրա մերձավոր ազգականի գույքային իրավունքներով, կամ եթե

տվյալ գույքային իրավունքների իրական շահառու է հանդիսանում այն անձը, որին պատկանում է գույքը, ապա այդ իրավունքները դադարում են գույքի բռնագանձման վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից:

Ընդ որում, ապօրինի ծագում ունեցող գույքը ենթակա է բռնագանձման, եթե ներկայացված ապացույցների գնահատմամբ դատարանը հանգում է հետևության, որ այդպիսի գույքի շուկայական արժեքը հայցի ներկայացման պահին գերազանցում է 50 միլիոն ՀՀ դրամը: Շուկայական արժեքում հաշվարկվում են նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բարելավումները, եթե դրանք անհնար է առանձնացնել գույքից՝ անկախ այդպիսի բարելավումներ կատարելու համար օգտագործված եկամտի օրինականությունից: Գույքի բռնագանձումից հետո անձն իրավունք ունի հետ պահանջելու բարելավումների իրականացման համար իր այն ծախսերը, որոնք կատարվել են օրինական եկամուտների օգտագործմամբ:

Ըստ էության, թե՛ ՀՀ գործող, թե՛ նոր քրեական օրենսգրքերը և թե՛ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը սահմանում են գործիքակազմ՝ ուղղված կոռուպցիոն հանցագործությունների արդյունքում ձեռք բերված գույքի/եկամուտների բռնագանձման արդյունավետության ապահովմանը:

ՀՂՈՒՄՆԵՐ

Հղումները նախատեսված են Ձեզ հետաքրքրող նյութերի մասին հավելյալ գիտելիքներ ստանալու համար:

1 Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա, 31.10.2003,
https://www.arlis.am/documentview.aspx?docID=48021
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

2 Կոռուպցիայի մասին Քրեական իրավունքի կոնվենցիա, ԵԽ, 27.01.1999,
http://www.irtek.am/views/act.aspx?aid=40642
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

3 «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» 2020թ.-ի ապրիլի 16-ի ՀՀ օրենք,
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151039
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

ԲԱՌԱՐԱՆ

Այս հատվածում ներկայացված են դասի նյութին առնչվող առանցքային եզրույթները և դրանց բացատրությունները: Դրանք Ձեզ կօգնեն դասի նյութն ավելի հեշտ ընկալել: Եզրույթների բովանդակությունն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 10 րոպե:

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔ — Գույք է, այդ թվում՝ մեկ միավոր գույք, մի քանի միավոր գույք կամ մեկ միավոր գույքի բաժին, որի ձեռքբերումը «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով չի հիմնավորվում օրինական եկամուտներով՝ անկախ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ կամ հետո ձեռք բերված լինելու հանգամանքից, ինչպես նաև այդպիսի գույքի օգտագործումից ստացվածը (պտուղները, արտադրանքը, եկամուտները):

ԲԱՐԵԽԻՂՃ ԵՐՐՈՐԴ ԱՆՁ — Այն անձն է, որը ձեռք է բերել հանցավոր ծագում ունեցող գույքը կամ ծանրաբեռնել է այն իր իրավունքներով, բայց չգիտեր և չէր կարող իմանալ, որ այդ գույքը հանցագործության արդյունքով ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված գույք է, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտ կամ այլ տեսակի օգուտ, հանցագործության համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիք կամ միջոց կամ հանցագործության առարկա:

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ — Ֆիզիկական անձ է, որի անունից, օգտին կամ որի հաշվին իրականացվել է գործարքը (գործողությունը), կամ ֆիզիկական անձ, որը վերահսկում է կամ վերահսկել է գործարքը (գործողությունը) կամ այն անձին, որի անունից կամ օգտին իրականացվել է գործարքը (գործողությունը):

ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁ — Անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձ, մերձավոր ազգական կամ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որի

հետ տվյալ անձը վարում է ընդհանուր տնտեսություն կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որին տվյալ անձն անհատույց կամ փաստացի անհատույց կամ շուկայականից էականորեն ցածր գնով փոխանցել է գույք: